# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

*1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. 060-80-50-80,*
*Վեբ-կայք: http://www.odzun.am , Skype: odzun.lori, էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)*

*թիվ 86-17*
*22 փետրվարի, 2017թ.*

*ՀՀ Լոռու մարզպետ*
*Պարոն Ա. Նալբանդյանին*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի, կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու կողմից 2017 թվականի փետրվարի 22-ին կայացված չորրորդ հերթական նիստի ժամանակ ընդունված որոշումները՝ N 11-ից N 16:

Առդիր՝ 11 էջ:

*Հարգանքով*
*Օձուն համայնքի ղեկավար* *Ա. Տիտանյան*

Կատարող՝ Ն. Վարդանյան
հեռ. 060-80-50-80

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**22 փետրվարի 2017 թվական, N 11-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ, 10-րդ և 12-րդ մասերի, 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 16-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 22-ի չորրորդ հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

| Կողմ ( 7 ) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|
| Ա. ԱՊՐԵՍՅԱՆ | | |
| Դ. ԲՈՇՅԱՆ | | |
| Դ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Գ. ԹՈՐՈՍՅԱՆ | | |
| Ա. ՋԱՎԱՐՅԱՆ | | |
| Հ. ՉՈԲԱՆՅԱՆ | | |
| Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ | | |

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2017թ., փետրվարի 22,
Լոռու մարզ, գ. Օձուն

*Հավելված*
*ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու*
*2017 թվականի փետրվարի 22-ի N 11-Ա որոշման*

# ՕՐԱԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ՉՈՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
(զեկուցող՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Միքայելյան)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
(զեկուցող՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Միքայելյան)

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
(զեկուցող՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Միքայելյան)

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ ՀԱՇՎԱՐԿԵԼԸ ԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ «ՕՁՈՒՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ.
(զեկուցող՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Միքայելյան)

5. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱԶԳԱՆ ՉՈՓՈՒՐՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆԻ, ՊԱՐԳԵՎ ԱՅՎԱԶՅԱՆԻ, ՆԱՐԵԿ ՃԱՐՈՅԱՆԻ, ԶԱՐՈՒՀԻ ՂՈՒԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
(զեկուցող՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Միքայելյան)

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**22 փետրվարի 2017 թվական, N 12-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի 2017 թվականի բյուջեում կատարվող փոփոխությունները չեն խախտում համայնքի բյուջեի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հավասարակշռությունը.

1. կատարել փոփոխություններ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» N 57-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Կողմ ( 7 ) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|
| Ս. ԱՊՐԵՍՅԱՆ | | |
| Դ. ԲՈՇՅԱՆ | | |
| Դ. ԴԱՎԹՅԱՆ | | |
| Գ. ԹՈՐՈՍՅԱՆ | | |
| Ա. ՋԱՎԱՐՅԱՆ | | |
| Հ. ՉՈԲԱՆՅԱՆ | | |
| Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ | | |

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2017թ., փետրվարի 22,
Լոռու մարզ, գ. Օձուն

*Հավելված*
*ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու*
*2017 թվականի փետրվարի 22-ի N 12-Ն որոշման*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 01.01.01. գործառնական դասակարգման նախահաշվի 5122 հոդվածով նախատեսված գումարը պակասեցնել 2.396,442 հազար (երկու միլիոն երեք հարյուր իննիսունվեց հազար չորս հարյուր քառասուներկու) ՀՀ դրամով.

2. պահուստային ֆոնդի 30 տոկոսը հատկացնել ֆոնդային բյուջեին՝ 1.901,970 հազար (մեկ միլիոն ինն հարյուր մեկ հազար ինն հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ.

3. 01.01.01. գործառնական դասակարգման նախահաշվի 5129 հոդվածով նախատեսել 6.000,0 հազար (վեց միլիոն) ՀՀ դրամ.

4. այլ հիմնական միջոցների օտարումից մուտքեր՝ հաշվեհամար 900265139213 (29.51.00.) նախատեսել 1.701,588 հազար (մեկ միլիոն յոթ հարյուր մեկ հազար հինգ հարյուր ութսունութ) ՀՀ դրամ:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

22 փետրվարի 2017 թվական, N 13-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ, հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, 77-րդ հոդվածի, 80-րդ հոդվածի, 90-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի (այսուհետ՝ համայնքի ղեկավար) առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 12-Ն որոշման համաձայն ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի 2017 թվական բյուջեում կատարված փոփոխությունները.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի համար, Տոյոտա ՌԱՎ 4 (Toyota RAV 4) մակնիշի կամ համարժեք, ամենագնաց տեսակի, 2009 թվականի կամ դրանից բարձր թվականների արտասահմանյան արտադրության, մինչև վեց միլիոն (6.000,000) ՀՀ դրամ արժողությամբ ծառայողական ավտոմեքենա (այսուհետ՝ գույք) ձեռք բերելու համար տալ համաձայնություն:

2. Օձուն համայնքի ղեկավարին.

1) գույքի ձեռք բերման գործընթացն իրականացնել գնումների միջոցով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.

2) սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություններ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանուն՝ առաջիկա նիստում հաստատելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ ( 7 ) Դեմ ( չկա ) Ձեռնպահ ( չկա )

Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Դ. ԲՈՇՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ԶԱՎԱՐՅԱՆ
Հ. ՉՈԲԱՆՅԱՆ
Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2017թ., փետրվարի 22,
Լոռու մարզ, գ. Օձուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**22 փետրվարի 2017 թվական, N 14-Ն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 11-րդ, 128-րդ, 129-րդ, 169-րդ, 464-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, 77-րդ հոդվածի, 80-րդ հոդվածի, «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի (այսուհետ՝ համայնքի ղեկավար) առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը, անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման մասին եզրակացությունը, նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու (այսուհետ՝ համայնքի ավագանի) 2017 թվականի փետրվարի 22-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 13-N որոշման համաձայն նախատեսվում է ‹‹Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի աշխատակազմ›› համայնքային կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Օձունի համայնքապետարան) համար ձեռք բերել նոր ծառայողական ավտոմեքենա.

1. համայնքային սեփականություն հանդիսացող՝ Օձունի համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենան՝ մակնիշը՝ ՎԱԶ 21214 ՆԻՎԱ, պետ. համարանիշ՝ 454UL38, արտադրության թվականը՝ 2004, թափքի համարը՝ 1757985, շարժիչի համարը՝ 7795115, իդենտիֆիկացիոն համարը (VIN)՝ XTA21214041759885 (այսուհետ՝ գույք) հրապարակային սակարկություններով՝ բաց աճուրդով, օտարելու համար տալ համաձայնություն:

1) Աճուրդի մեկնարկային գին սահմանել 900000 (ինն հարյուր հազար) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը՝ 45000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ, մասնակցության վճար՝ հինգ հազար (5000) ՀՀ դրամ:

2. Գույքն օտարելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ չկան:

3. Գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցներն օգտագործվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ուղղվում են համայնքային բյուջեի ֆոնդային մաս:

4. Համայնքի ղեկավարին՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել սույն որոշման առաջին կետով սահմանված գույքն աճուրդով օտարելու հետ կապված աշխատանքները.

2) գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություն և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանուն՝ առաջիկա նիստում հաստատելու համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Կողմ ( 7 ) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|

Ա. ԱՊՐԵՍՅԱՆ

Դ. ԲՈՇՅԱՆ

Դ. ԴԱՎԹՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Ա. ՁԱՎԱՐՅԱՆ

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2017թ., փետրվարի 22,
Լոռու մարզ, գ. Օձուն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**22 փետրվարի 2017 թվական, N 15-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ ՀԱՇՎԱՐԿԵԼԸ ԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ «ՕՁՈՒՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի (այսուհետ՝ համայնքի ղեկավար) առաջարկությունը.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի վարչական տարածքում աղբահանության վճար վճարողների հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, ինչպես նաև այդ վճարը գանձելու (համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ մուտքագրելու) և դրանց հետ անմիջականորեն կապված գործառույթները վերապահել «Օձունի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Կազմակերպությունը պարտավոր է համայնքի ղեկավարին ներկայացնել ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:
3. Համայնքի ղեկավարին՝ աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման՝ կազմակերպության կողմից իրականացվող, գործառույթների նկատմամբ իրականացնել համապատասխան հսկողություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ ( 7 ) Դեմ ( չկա ) Ձեռնպահ ( չկա )

Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Դ. ԲՈՇՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Հ. ՉՈԲԱՆՅԱՆ
Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2017թ., փետրվարի 22,
Լոռու մարզ, գ. Օձուն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**22 փետրվարի 2017 թվական, N 16-Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՉԱԳԱՆ ՉՈՓՈՒՐՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆԻ, ՊԱՐԳԵՎ ԱՅՎԱԶՅԱՆԻ, ՆԱՐԵԿ ՃԱՐՈՅԱՆԻ, ՋԱՐՈՒՀԻ ՂՈՒԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18–րդ հոդվածի, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13–րդ հոդվածի, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15–րդ հոդվածի 3–րդ մասի, «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10–րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի «ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 300 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 822-Ն որոշման՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը.

1. քաղաքացիներ Վաչագան Չոփուրյանի, Սամվել Չոբանյանի, Պարգև Այվազյանի, Նարեկ Ճարոյանի և Ջարուհի Ղուլյանի նկատմամբ սահմանել գույքահարկի գծով, իսկ քաղաքացի Արթուր Կոստանդյանի նկատմամբ հողի հարկի գծով արտոնություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ ( 7 ) Դեմ ( չկա ) Ձեռնպահ ( չկա )

Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Դ. ԲՈՇՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Հ. ՉՈԲԱՆՅԱՆ
Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2017թ., փետրվարի 22,
Լոռու մարզ, գ. Օձուն

Հավելված
<< Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 22-ի N 16-Ա որոշման

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՉԱԳԱՆ ՉՈՓՈՒՐՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆԻ, ՊԱՐԳԵՎ ԱՅՎԱԶՅԱՆԻ, ՆԱՐԵԿ ՃԱՐՈՅԱՆԻ, ԶԱՐՈՒՀԻ ՂՈՒԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

| N | Հարկ վճարողի անվանումը՝ իրավաբանական անձի դեպքում, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը | Հարկ վճարողի գտնվելու (հաշվառման) վայրը | Գույքի գտնվելու վայրը | Գույքի տեսակը (նկարագիրը) | Սոցիալական քարտի համարը (ֆիզ անձի դեպքում) | ՀՎՀՀ | Հարկատուի կողմից հայցվող արտոնության գումարը (<<հայտով>>), ՀՀ դրամով | Հարկատուի նկատմամբ կիրառված << ... >> արտոնության տեսակը | Արտոնության կիրառման ամսաթիվը, ամիսը, տարին | Համապատասխան հարկատուների նկատմամբ սահմանված արտոնությունները (<<հայտով>>): արտոնության տեսակը | արտոնության չափը՝ ՀՀ դրամով |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | Վաչագան Յուրիկի Չոփուրյան | << ԼՄ գ. Օձուն, փողոց 17, տուն 2/2 | << ԼՄ գ. Օձուն, փողոց 17, տուն 2/2 | փոխադրամիջոց, մակնիշը՝ VOLKSWAGEN VENTO, պետ. համարանիշ՝ 20SS129, 1995թ. | - | S0250111 | 8567 | հարկի նվազեցում | 22.02.2017 | 2016թ. գույքահարկի ապառք | 8000 |
| | | | | | | | | | | 2016թ. գույքահարկի տույժ | 567 |
| 2 | Չոբանյան Սամվել Ալեքսանդրի | << ԼՄ գ. Օձուն, փողոց 5, տուն 24 | << ԼՄ գ. Օձուն, փողոց 5, տուն 24 | փոխադրամիջոց, մակնիշը՝ ԳԱԶ 24, պետ. համարանիշ՝ 14SU304, 1972թ. | - | 13619191 | 19556 | հարկի նվազեցում | 22.02.2017 | 2016թ. գույքահարկի ապառք | 9500 |
| | | | | | | | | | | 2016թ. գույքահարկի տույժ | 556 |
| | | | | | | | | | | 2017թ. գույքահարկի ապառք | 9500 |
| 3 | Այվազյան Պարգև Մաքսիմի | << ԼՄ գ. Օձուն, փողոց 5, նրբանցք 1, տուն 8 | << ԼՄ գ. Օձուն, փողոց 5, նրբանցք 1, տուն 8 | փոխադրամիջոց, մակնիշը՝ ՄԻՑՈՒԲԻՇԻ PAJERO, պետ. համարանիշ՝ 33OO331, 2007թ. | - | 13793915 | 12788 | հարկի նվազեցում | 22.02.2017 | 2015թ. գույքահարկի տույժ | 11168 |
| | | | | | | | | | | 2016թ. գույքահարկի տույժ | 1620 |
| 4 | Ճարոյան Նարեկ Թաթուլի | << ԼՄ գ. Օձուն, փողոց 10, տուն 27 | << ԼՄ գ. Օձուն, փողոց 10, տուն 27 | փոխադրամիջոց, մակնիշը՝ GAZ 2102, պետ. համարանիշ՝ 34TZ402 , 1985թ. | - | S0250354 | 21005 | հարկի նվազեցում | 22.02.2017 | 2016թ. գույքահարկի ապառք | 10000 |
| | | | | | | | | | | 2016թ. գույքահարկի տույժ | 1005 |
| | | | | | | | | | | 2017թ. գույքահարկի ապառք | 10000 |
| 5 | Ղուլյան Զարուհի Սասունի | - | << ԼՄ գ. Օձուն, փողոց 5, թիվ 26 | հաս. նշ. շինություն, կադ. ծածկագիր՝ 06-112-052-014-001, | - | S0250069 | 168650 | հարկի նվազեցում | 22.02.2017 | 2011թ. գույքահարկի ապառք | 31590 |
| | | | | | | | | | | 2012թ. գույքահարկի ապառք | 68530 |
| | | | | | | | | | | 2013թ. գույքահարկի ապառք | 68530 |
| 6 | Կոստանդյան Արթուր Ժորայի | << ԼՄ գ. Օձուն, փողոց 5, նրբանցք 1, տուն 11 | | 1.54 հա, 06-112-0432-0004 կադաստրային ծածկագրով վարելահող | | S0250332 | 56360 | հարկի նվազեցում | 22.02.2017 | 2008թ. հողի հարկի տույժ | 12693 |
| | | | | | | | | | | 2009թ. հողի հարկի տույժ | 2305 |
| | | | | | | | | | | 2010թ. հողի հարկի տույժ | 7780 |
| | | | | | | | | | | 2011թ. հողի հարկի տույժ | 8328 |
| | | | | | | | | | | 2012թ. հողի հարկի տույժ | 8328 |
| | | | | | | | | | | 2013թ. հողի հարկի տույժ | 8328 |
| | | | | | | | | | | 2014թ. հողի հարկի տույժ | 8326 |
| | | | | | | | | | | 2016թ. հողի հարկի տույժ | 272 |
| 7 | *Ընդամենը* | | | | | | 286926 | | | | 286926 |

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՏԻՏԱՆՅԱՆ